ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

« 07 » հոկտեմբերի 2016թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ավագանու 03.10.2016թ. թիվ 38, թիվ 39 և թիվ 40 որոշումներ:

Վահագնի համյաքի ղեկավար Պ. Քոչինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 03 » հոկտեմբերի 2016 թվականի N 38

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով §Տեղական ինքնակառավարման մասին¦ Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով Վահագնի համայնքի ավագանին որոշում է .

Հաստատել Վահագնի համայնքի ավագանու 2016թ.-ի հոկտեմբերի 03-ի նիստի օրակարգը:

Օրակարգ
Վահագնի համայնքի ավագանու 2016թ.-ի հոկտեմբերի 03-ի նիստի

1. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի ղեկավարի 2016թ.-ի բյուջեի III եռամսյակի կատարման հաշվետվությունն ավագանուն ներկայացնելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Վահրամ | [signature] | | |
| Փարեմուզյան Միհեր | [signature] | | |
| Քոչինյան Բորիս | [signature] | | |
| Քոչինյան Տելեմակ | [signature] | | |
| Մխիթարյան Վրեժ | [signature] | | |

Վահագնի համայնքի ղեկավար [signature, stamp] Պ. Քոչինյան

Т

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» հոկտեմբերի 2016 թվականի N 39

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 05-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Վահագնի համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 2--Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Վահագնի համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Վահրամ | [signature] | | |
| Փարեմուզյան Մհեր | [signature] | | |
| Քոչինյան Բորիս | [signature] | | |
| Քոչինյան Տելեմակ | [signature] | | |
| Մխիթարյան Վրեժ | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ / [signature] / Պ.ՔՈՉԻՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Վահագնի համայնքի ավագանու
2016 թվականի օգոստոսի հոկտեմբերի 03-ի N 39 որոշման

# ՑՈՒՑԱԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Ներսիսյան Անահիտ — հիսուն հազար դրամ
2) Կիրակոսյան Նազելի — քսան հինգ հազար դրամ
3) Կոստանյան Հարություն — քսան հինգ հազար դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ հարյուր հազար դրամ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
«ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ»
ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

<<03 >> հոկտեմբերի 2016 թվականի N 40

## ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ III ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16-րդ , 69-րդ հոդվածներով և հիմք ընդունելով ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքի 35-րդ հոդվածով .

Համայնքի ավագանին **որոշեց**`

Ընդունել ի գիտություն ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի ղեկավարի 2016թ.-ի բյուջեի III եռամսյանկի ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության վերաբերյալ ներկայացված հաղորդումները:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Վահրամ | | | |
| Փարեմուզյան Միեր | | | |
| Քոչինյան Բորիս | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| Մխիթարյան Վրեժ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՔՈՉԻՆՅԱՆ